

ԾՈՒԽ ՍՈՒՐԲ ԱՐԳԱՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԱՔԱՑՏԵՅԼ, ԱՐԻՁՈՆԱ

8849 East Cholla Street, Scottsdale, Arizona 85260

Առաջնորդ Սրբազան Հայրը Շաբաթ, Ապրիլ 11ին, 2009 Սուրբ Զարկուան Ճրագայլոյցին Առաջնորդանիստ Մայր Տաճարի Կառուցման Վերահսկիչ՝ Հոգշ. Տ. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեանի, Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Զաքարիա Քինյ. Սարիբէկեանի, Սարկաւագաց եւ Դպրաց Դասի մասնակցութեամբ Նաւակարիքի Արարողութիւնը կատարեց Աբացտէյլի Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցւոյ:

Կիրակի, Սեպտեմբեր 20ին Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի Պատարագէ: Սուրբ Սեղանին պիտի սպասարկեն Ծուխին Հոգեւոր Հովիւը եւ Սարկաւագները: Իսկ դպրաց դասի ներդաշնակ երգեցողութիւնը պիտի կատարէ Առաջնորդանիստ Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօպիւմեանի: Սրբազան Հայրը ըստ Հայց. Եկեղեցւոյ ձէսի եւ կանոններու, պիտի կատարէ Սուրբ Աբգար Հայց. Եկեղեցւոյ Օծումը:

ՀԱԿԻՐՃ ՊԱՏՄԱԿԱՆԸ ՍՈՒՐԲ ԱՐԳԱՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԻ

Այս Ծուխի անդամները սկսած են կազմակերպուիլ 1957ին: 1963ին առաջին Սուրբ Պատարագը մատուցուած է օրուան Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի կողմէ: Ամիսը անգամ մը Սուրբ Պատարագ կը մատուցուէր օտար եկեղեցւոյ մէջ: Ծուխը բաւական կազմակերպուած է եւ կը բաղկանայ Ամերիկահայերէ, Միջին Արեւելքէն գաղթած հայերէ եւ փարբեր երկիրներէն գաղթած հայերէ:

1982ին շնորհիւ Օրիորդ Սարկրիթ Յովսէփեանի նուիրած հողին եւ Տէր եւ Տիկին Կրէկ Մելիքեանի նուիրատուութեան, կարելի դարձաւ «Մելիքեան Մշակութային Կեդրոն»ի կառուցումը, որուն պաշտօնական բացումը կատարուեցաւ 1992ի Յունուարին: Այս սրահը կը գործածուի որպէս եկեղեցի եւ հաւաքավայր զանազան ձեռնարկներու: Տարիներ առաջ բացումը կատարուեցաւ նաեւ Ծուխի գրադարանին:

Դարձեալ Օրիորդ Յովսէփեանի բարերարութեան շնորհիւ, կարելի կը դառնայ համալիրէն ներս կառուցումը նոր եկեղեցւոյ: Ծուխը արդէն իսկ բաւարար գումար հանգանակած էր այս նպատակը իրագործելու համար: Վեհափառ Հայրապետի Արեւմտեան Թեմ շնորհած Հովուապետական Բ. Այցելութեան ընթացքին՝ Յունիս 16ին, 2005 կատարուեցաւ եկեղեցւոյ հողի օրհնութիւնը: